ոչ ծաղկարարը Հոռոմոսի վանքում, ապա 1219 թվականի Խարբերդի շրջանի Բարզանճա անապատում գրված մի ձեռագրում (ձեռ. №. 7734, էջ 13բ և 130բ)։

Ուշադրություն է գրավում գնդիկավոր գրչի մի այլ օրինակ 1292 թվականին, Նորավանքում (Սյունիք) գրված մի ավետարանում (ծաղկող՝ Մոմիկ, ձեռ. № 2848), այստեղ Պրոխորի ձեռքին նկարված ենք տեսնում մի բավականին մեծ գնդիկավոր գրիչ (տես նկ. 2)։

Նկ. 2. Հատված № 2848 ձեռագրի 245բ էջի մանրանկարից (Նորավանք, 1292 թ.)։

Այսպիսով, գնդիկավոր գրիչների հանդիպում ենք 12-րդ դարում Կիլիկիայում և 13-րդ դարում՝ Հայաստանի տարբեր շրջաններում։

Այն մանրանկարներում, որտեղ պատկերված են միաժամանակ գնդիկավոր գրիչներ և թանաքամաններ, նկատվում է, որ թանաքամանում եղած թանաքի և գրչի գնդիկի մեջ գտնվող թանաքի գույնը միշտ նույնն է և համապատասխանում է ձեռագրի գրության գույնին։

Գնդիկավոր գրիչների և նրանց վերաբերող պիտույքների ավելի մանրամասն նկարագիրը մեզ կօգնի ճիշտ եզրակացության հանգելու այն մասին, որ գոյություն են ունեցել իրենց ներսում թանաք պարունակող գրիչներ՝ «ինքնահոսներ»։

№ 7347 ձեռագրի 12բ էջում պատկերված են չորս, իսկ 103բ էջում երեք գնդիկավոր գրիչներ, որոնց գնդիկները և գրչածայրերը սև գույն ունեն, իսկ կոթերը՝ կարմիր։ Թանաքամաններում կան սև, կարմիր և ոսկեգույն թանաքներ։ Նման մանրանկարներ կան նաև այս նույն ձեռագրի 164բ և 264բ էջերում։

Բոլոր մանրանկարներում էլ գրչածայրի, գնդիկի, թանաքի և ավետարանչի ձեռքի ձեռագրի գրության գույնը նույնն են։ Այսպես՝ № 7737 ձեռագրի 208բ էջում պատկերված Մարկոս ավետարանչի ձեռքի գրչի գնդիկը և գրչի ծայրը կարմիր են, կարմիր է նաև գրքի գրությունը։ 334բ էջում նկարված Ղուկաս ավետարանչի ձեռքի գրչածայրը և գնդիկը կապույտ են, ինչպես և այն տողը, որը նա գրում է։ Ուշագրավ են № 7734 ձեռագրում նկարված գրիչները։ 13բ էջում Մատթեոս ավետարանիչը ձեռքին բռնել է սովորական եղեգնյա գրիչ, իսկ նրա մոտ, սեղանի վրա դրված են երկու գնդիկավոր գրիչներ, որոնց գնդիկները և ծայրերը սև են ներկված, իսկ գրչի երիզագիծը և կոթը՝ կարմիր։ Թանաքամանի թանաքը սև է, ավետարանչի ձեռքի գրքի